ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 09 >> ապրիլի 2014թվական N: 70 Ա **ք.Գյումրի**

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՂԵԳԻՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ հաստատված <<Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման կարգի>> 9-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերի դրույթներով.

Որոշում եմ՝

1. Ստեղծել բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման ուղեգիր տրամադրող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ֆ.ՑՈՂԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի
2014 թվականի ապրիլի
N -Ա որոշման

Կ Ա Զ Մ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՂԵԳԻՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հարություն Արշակյան-	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Հովհաննես Հովհաննիսյան-	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
Աննա Գյունաշյան-	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ ,
Սամվել Գրիգորյան -	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:
Հայկուշ Ավետիսյան -	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի
2014 թվականի ապրիլի 09-ի
N 70-Ա որոշման

Կ Ա Ր Գ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՂԵԳԻՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման ուղեգիր տրամադրող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստերի վարման, որոշումների ընդունման կարգն ու պայմանները, քաղաքացիների դիմումների ընդունման, հերթագրման, քննարկման, այդ թվում՝ դիմումի մերժման հիմքերը և ընթացակարգերը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

2. Հանձնաժողովի նպատակը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման ուղեգիր տրամադրելու հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ հաստատված՝ <<Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման կարգով>> սահմանված գործունեության իրականացումն է:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Հանձնաժողովն իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

4. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Հանձնաժողովի նիստին կարող է հրավիրվել դիմումատուն:

5. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Հանձնաժողովի նիստերի արձանագրություններն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

7. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկության ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

8. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

9. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

3) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

4) Ներկայացնում է հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը՝ այդ թվում հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը.

5) Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.

6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

10. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը.

2) արձանագրում է հանձնաժողովի նիստերը.

3) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

4) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

11. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

VI I. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

12. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին.

2) կարող է առաջարկություններ ներկայացնել նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3)կարող է ծանոթանալ հանձնաժողովի նիստերի արձանագրություններին, անհրաժեշտության դեպքում կատարել դիտողություններ և առաջարկություններ.

4) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

13.Հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

VI I I. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՀԵՐԹԱԳՐՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

14. Քաղաքացիների դիմումները կից նյութերով գրանցվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգին համապատասխան:

15. Հերթագրումը կատարվում է ըստ դիմելիության ժամկետների, որի վերաբերյալ հիվանդներին տրվում է հերթագրման թերթիկ, և կատարվում է գրառում բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման իրավունք ունեցող հիվանդների հերթագրման մատյանում (NN 1 և 2 ձևեր):

16. Հերթագրված հիվանդների բուժման ժամանակացույցը (հերթը) կարող է փոփոխվել միայն հիվանդի առողջական վիճակից ելնելով, և հիվանդին կարող է արտահերթ բժշկական օգնություն տրամադրվել համապատասխան բժշկական

ցուցումների առկայության դեպքում, որի մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի կողմից՝ անհրաժեշտ մասնագետների ներգրավմամբ, ընդ որում, հանձնաժողովի որոշման մասին համապատասխան նշում է կատարվում հերթագրման մատյանում:

17. Հերթագրված հիվանդներն իրենց բժշկական օգնության ժամկետի մասին տեղեկացվում են գրավոր, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով (հիվանդի կամ նրա հարազատի համաձայնությամբ):

18. Հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմումը և բժշկական ցուցումների առկայության դեպքում, համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից տրված եզրակացության հիման վրա, բավարարում կամ մերժում է այն:

19. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ձև N 1

Մ Ա Տ Յ Ա Ն

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԵՐԹԱԳՐՄԱՆ

NN ը/կ	Անունը, հայրանունը, ազգանունը	Բնակության վայրը	Ախտորոշումը	Ուղեգրող կազմակերպության անվանումը	Դիմելու ամսաթիվը	Նախատեսվող ընդունման ամսաթիվը	Այլ նշումներ

Ձև N 2

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող Շիրակի մարզային հանձնաժողով

ՀԵՐԹԱԳՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ N _____

Ամսաթիվը _____

Հիվանդի անունը, ազգանունը _____

Բնակության վայրը_____

Նախատեսվող ընդունման ամսաթիվը _____

Հիվանդը կամ նրա հարազատը _____

(ստորագրությունը) (Անուն ազգանունը)

Հանձնաժողովի նախագահը՝ _____

(ստորագրությունը) (Անուն ազգանունը)

կտրման գիծը

Հիվանդին տրվող կտրոն

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող Շիրակի մարզային հանձնաժողով

ՀԵՐԹԱԳՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ N ____

Ամսաթիվը _____

Հիվանդի անունը, ազգանունը _____

Բնակության վայրը_____

Նախատեսվող ընդունման ամսաթիվը _____

Հիվանդը կամ նրա հարազատը _____

(ստորագրությունը) (Անուն ազգանունը)

Հանձնաժողովի նախագահը՝ _____

(ստորագրությունը) (Անուն ազգանունը)